ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
"MKHITAR SEBASTATSI" EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064,Երևան.Ա.Բաբաջանյան 25 հեռ:74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

*Հաստատված է*
*ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՄՍԿՀ-15/20 ծածկագրով*
*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի*
*հանձնաժողովի*
*2015թ. Սեպտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ*

*ՀՀ ԿԳՆ «Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

ՀՀ ԿԳՆ «Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

*Հարգելի մասնակից*

*Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

### ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

4. Հայտը ներկայացնելու կարգը

5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

7. Հայտերի բացումը

8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

9. Պայմանագրի կնքումը

10. Պայմանագրի ապահովումը

11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

## ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

ՀՀ ԿԳՆ «Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՄՍԿՀ-15/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Ա. Բաբաջանյան 25 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա (7 հոկտեմբեր 2015թ.) ժամը 12:00 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ 6 հոկտեմբեր, 2015թ ժամը 16:00: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՀՀ ԿԳՆ «Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@mskh.am,

հեռախոսահամարն է՝ 010 74 11 12:

**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝** **Ա. ԲԼԵՅԱՆ**